**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ N 616-Ա**

«17» հուլիս 2024 թվական    քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 82-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 26-րդ կետերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3 րդ մասերի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով քաղաքացի Արայիկ Վարդանի Գալստյանի 2024 թվականի ապրիլի 08-ի դիմումը՝ Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 23-ի N 82-Ա որոշմամբ քաղաքացի Արայիկ Վարդանի Գալստյանի նկատմամբ նշանակված 2 000 000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանքի չափը նվազեցնելու խնդրանքի վերաբերյալ, և այն, որ քաղաքացու կողմից ինքնակամ կառուցված շինությունը օգտագործվելու է որպես բնակչության սպասարկման օբյեկտ և ստեղծվելու են նոր աշխատատեղեր.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 23-ի <<Քաղաքացի Արայիկ Վարդանի Գալստյանի նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին>> N 82-Ա որոշման 1-ի կետում նշված <<2 000 000 (երկու միլիոն)>> թիվն ու բառերը փոխարինել <<1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար>> թվով ու բառերով:

2. Սույն որոշմը երեք օրվա ընթացքում ուղարկել Քաղաքացի Արայիկ Վարդանի Գալստյանի /հետագայում՝ Քաղաքացի/:

3 Որոշումն ուժի մեջ է մտնում Քաղաքացուն սույն որոշման 2-րդ կետով սահմանված ժամկետում պատշաճ ծանուցման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«17» հուլիս 2024 թվական
Քաղաք Մարալիկ